

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր րառին 2 կոպէկ:

ԲԱՆԱԲԱՅԱՆ ԵՒ ԴՐԱՎԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻՆԿԱՑ 1884 ԹԻՒՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ԴԻՐԻՔՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

Պ Ր Օ Գ Ր Ա Մ Ա

I. ՏԵՐԻՏԻՆԻԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ: II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ: III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: V. ԽՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ: VI. ՀՆՈՒՊԻՐՆԵՐ: VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ֆելիետոն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ: VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ: Տարեկան 10 ռուբլ, վեց ամսվայ 6 ռուբլ, իւրաքանչիւր ամսվայ 1 ռուբլ: ՀԱՏՈՎ համարները 5 կոպէկ: ՀԱՍՑԵՆ. Тифлис, редакция «Мшак».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

МАГАЗИНЪ офицерскихъ вещей
САЛАМБЕКОВА, на Дворцовой улицѣ,
въ домѣ Сараджева, будетъ открытъ
въ четвергѣ, сего 15-го декабря.

3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Բաժնիքի քանակնգա-
մեակի տօնողների խումբը: Նամակ Վաղանից: Ներ-
քին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ
Թիւրքիայից: ՀՆՈՒՊԻՐՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Եղիշի քրդեր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պ. ԲԱՅՅԻԻ ԲԱՆԱՆԿԱՆՈՒԹԱՆԻ ՏՈՆՈՂՆԵՐԻ
ԽՈՒՄԲԸ

Երջանիկ է այն ազգը, այն հասարակու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵԶԻԴԻ ԳՐԻՆԵՐ

I.

Երբ մի ժողովուրդ առանձին մարմին է կազ-
մում, բայց չընդգրկել յարաբերութեան մէջ չէ
զանվում իր համազգի կամ օտար տարրերի հետ,
թոյլ եւ տալի ինձ ասել, որ այդ ժողովուրդը
պատկերացնում է իր մէջ վայրենի և անկիրթ
բնաւորութեան ոգին, ուրիշ կերպով նա անշարժ
մնում է տղիտղիտեան մի և նոյն աստիճանի
վրա. նա տրամադիր չէ մտաւոր ստեղծագործու-
թեան, և եթէ նրա առօրեայ կեանքում նորանոր
զաղափարներ ստեղծվում էլ են, այն եւ շատ
անզգալի և շատ աննշան են: Այդպիսի ժողովուրդի
մտաւորական և նիւթապէս կղզիացած կեանքը
աղբիւր է համարվում բազմաթիւ հակամարդկային
զաղափարների. նրա մէջ խեղդելով է լուսաւո-
րութեան սէրը, մտաւոր զարգացման ձգտումն,
և որ աւելի նշանաւորն է՝ մեռնում է նրա մէջ
խղճի մաքրութիւնը:

Չը նայելով որ հայ տարրը ունեցել է աշխատու-
թիւն, յարատեւ ձգտումն և ընդունակ է եղել
գիտնական պարագիծների մէջ, այնուամենայ-
նիւ նրա մտաւոր շրջանը միշտ նեղ և սահմանա-
փակ է եղել և նա ազատ չէ մնացել զանազան

թիւնը, որ առիթ է ունենում իր հասա-
րակական գործիչներին յարգանաց ցոյցեր
արտայայտելու: Հասարակական գործունէու-
թեանց մէջ, անկասկած, ամենափառա-
գորականական ասպարէզն է: Մի գրող, որ
երկար տարիների ընթացքում կարողա-
նում է զիմանալ այդ դաժան աշխատան-
քին, մի գրող, որ ամբողջ քառորդ դար
ոչ մի րուպէ ձեռքից չէ վայր ձգում իր
գրիչը, չը նայելով կեանքի ոչ մի հա-
րուածքին, իրաւ, կարող է պատիւ բերել
այն հասարակութեան, որի մէջ նա աշխա-
տել է և գուցէ դեռ երկար տարիներ աշ-
խատելու է:

Այսօր մենք մեզ բաղդաւոր ենք համա-
րում, որ մեզ վիճակվել է հասնել այն
օրին, երբ վերջապէս արտայայտելու ենք

թշնամիների բարբարոս հարուածներից: Այն ցե-
ղերը՝ որոնցով հայերը չընդգրկված են եղել
շատ դարերի ընթացքում, նրանք ամեն մի քա-
լափոխում թողնել են հայերի վրա իրանց տղետ
և կողմիտ գործերի հետեւանքը: Նրանց օրի առա-
ջին զօհը՝ հայն է եղել, հայի դառը քրտինքով
ձեռք բերած աշխատութեան երախտը: Նրանց
սեպհականութիւնն է համարվել: Եղիշի ընդդեմ
հին ժամանակներից յայտնի է ինչպէս հայերին
ղրացի ժողովուրդը: Նա երկու կարգ փոփոխու-
թիւն է արել իր կեանքի մէջ. որտեղութիւ-
նից վայրենութիւն, այժմ ևս հովտականութիւն:
Նա իր ֆիզիքական կեանքը պահպանելու հա-
մար բաւականատեւ է բնութեան պարզեցումով
իսկ միւս պիտոյիցների պակասը լրացնելու հա-
մար, պատրաստ է լինել իր զրացիի ձեռքից ամեն
բան իրան օրի ոյժով:

Եղիշի ընդդեմ, արդէն շատ հին ժամանակներից
գոյութիւն է ունեցել Տաճկա-Հայաստանի մէջ,
և ինչպէս հայերին զրացի ժողովուրդը շատ մօտ
քայլ է արել հայ տարրի հետ ամեն կերպով միա-
նալու գործի մէջ:

Եղիշիները հայկական ծագումից են յառաջա-
ցած, որոնց տալիս էին հեթանոսական դարում
«Արեւորդը» անունը: (Ներսէս Շնորհաւուր ընդ-
հանրական գրքի մէջ, երես 223. Թուղթ ՚ի Սա-
մատիա քաղաք յաղագս Արեւորդեացն դարձի):
Եթէ մատենագիրների վկայութիւնները նրանց
ծագման մասին կարող են կասկածել լինել, բա-
ւական կենդանի ապացոյցներ են համոզվելու նրա-
նով, որ հայոց հեթանոսական դարի սովորու-
թիւններն այժմ մասամբ եղիշիների մէջ կարելի է

մեր անկեղծ յարգանքը դէպի մի վիպա-
սան-պուրկիստ, որ 1857—1858 թուա-
կաններից սկսած շարունակ և անդադար
ցոյց է տուել մեզ մեր հասարակական ցա-
ւերը, հասարակական վերքերը և աշխատել
է միջոցներ որոնել նրանց բուժելու հա-
մար, դէպի մի վիպասան-պուրկիստ, որ
շատերի պէս ոչ թէ աւերակների վրա բազ-
մած ողբ է կարդացել անցեալի վրա, այլ,
մանկով բուն ժողովրդի խորքերը և նրա
կեանքի մէջ, կարողացել է այսօր գրաւել
մեզ այդ ժողովրդով:

Դա այնպիսի մի մեծ ծառայութիւն է
հասարակութեան, որ մենք մինչև անգամ
հրաժարվում ենք զնահատելուց, քանի որ
վերջապէս նոյն իսկ հասարակութեան մէջ
ծնվել է մեր տաղանդաւոր վիպասան-պուր-
կիստի արդիւնաւոր գործունէութեան
տօնախմբութեան միտքը: Այդ տեսակ ծա-
ռայութիւնը միւս քաղաքակրթված հասա-
րակութիւնների մէջ ոչ թէ միայն ապահ-
վացնում է գործիչի անձնական նիւթական
զրույթները, այլ մինչև անգամ նրա ամբ-
բողջ սերունդը, չենք ուզում խօսել այն
բարոյական վարձատրութեան և հոգե-
կան հանգստութեան մասին, որ վայե-
լում են նրանք իրանց գործունէութեան
միջոցին: Իսկ ի՞նչպէս է վարձատրել հա-
յոց հասարակութիւնը իր վրա դիշեր ցե-
րեկ մտածող անխնջ զրականական «մշա-
կին»... Ո՞վ է մեզանից աշխատել իմանալ
թէ՞ ո՞րպիսի դառն և անմխիթար րուպէ-
ներում են գրված այն հատորները, որոն-
ցից այնքան ստեղծ բաբախել են մեր սրտե-
րը:

Այսօր, երբ մենք վերջապէս արտայայ-
տելու ենք մեր յարգանքը դէպի մեր սիրե-
լի բանաստեղծ-պուրկիստ Բաժնիքի — Մէլիք-

զտեկ, նմանապէս հայոց հնադարեան դիւցազնա-
կան աստուածները այժմ ևս մասնաւորապէս
յարգվում են եղիշի տարրից:

Եղիշիները ցոյց են տալի չափազանց զուտ
և յուսահատութիւն դէպի իրանց հաւատը, այնպէս
որ այն աստիճան խստութեան է հասնում նրանց
մէջ արհամարհանքը, որ շատերը թողնում են
և միանում լուսաւորական կրօնի հետ: Չի պա-
տահի մի տարր, որ երկու կամ երեք եղիշիներ
հայի կրօնը չընդունեն, և շատ սակաւ կը
պատահեն եղիշի քրդեր, որոնք հայերին խօսել
չիմանան:

Եղիշիները զուրկ են մշակված լեզուից, զուրկ
են և գրականութիւնից. նրանք չունեն այն փա-
ռաւոր անցեալը՝ որի պատմական յիշատակաբան-
ների հետ կապված լինելին. մնում է միայն ներկայից
օգտվել. ներկան ևս շատ մութ է նրանց համար:
Մտաւորապէս մի որոշ դադարաւոր կազմելու հա-
մար եղիշիների վրա, աւելորդ չեմ համարում
ծանօթացնել յարգելի ընթերցողներին նրանց
կեանքի և բնաւորութեան զանազան յատկու-
թիւնների և սովորութիւնների հետ:

II.

Եղիշիները իրանց հետ անբաժան կերպով պահ-
պանել են հեթանոսական դարուց բազմաստուա-
նութեան զաղափարները: Նրանց մէջ, ինչպէս
բաժնիքեան նախապատկեր յիշատակվում է լու-
սինը իր բոլոր առաւելութիւններով: Նրանք բա-
ւական շատ կենդանի պատմութիւններ են ասում
ժողովրդական հեքիաթների մէջ լուսնի վերաբե-
րութեամբ: Արեւ համարում են որպէս բնու-
թեան բոլոր առաքանիքին կենդանութիւն տուող

զաղէն, աշխատեք նաև միջոց տալու յար-
գելի իւրիւրեարին նոր տպագրութեամբ ի
լոյս ընծայելու թէ՛ արդէն տպած և թէ՛
անտպա մնացած բազմամեայ աշխատու-
թիւնները, դրանով մի կողմից մենք միջոց
տուած կը լինենք հասարակութեանը աւե-
րի ընդարձակելու Բաժնիքի աշխատութիւն-
ների ընթերցանութիւնը, իսկ միւս կողմից,
զոհե այժմ մենք կը կատարենք այն պար-
տաւորութիւնը, որ վաղուց կատարելու
էինք, այն է՝ զոհե մի փոքր թեթեւացնել
այն նիւթական զրկանքները, որ այսչափ
տարիներ կրել է և շարունակում է կրել
մեր յարգելի վիպասանը: Աններելի է, վերջա-
պէս, մեզ համար անտարբեր նայել մի գրա-
կանական մշակի վրա, որ անտրտուն
ու լուռ տանում է իր անմխիթար նիւթա-
կան դրութիւնը...

Մենք ոչ միայն կարծում ենք, այլ հա-
մոզված ենք, որ դա պ. Բաժնիքի բոլոր
համակրողների միակ ցանկութիւնն է, ու-
րեմն թոյլ տուեցէք մեզ, յարգելի խմբա-
գիր, ինչդրեւ ձեզ ընդունել այն բոլոր
նուէրները, որ այն նպատակով կը յանձ-
նվեն կամ կուղարկվեն զանազան քաղաք-
ներից ձեր խմբագրութեան հասցեով:

Յօդուածներ կատարվելու է առաջիկայ
տարվայ սկզբի ամիսներում, որի մասին
խումբը իր ժամանակին կարեւոր տեղեկու-
թիւններ կը տայ:

Ի դիմաց խմբի քարտուղար՝ Գաբրիէլ
Միրզոյեանց

ՆԱՄԱԿ ՂԱԶԱՆԻՑ

Նոյեմբերի 28-ին

Մեր կողմից գիտնականներ աւարտողները,
ինչպէս յայտնի է, իրանց բարձրագոյն ուսումը
շարունակելու համար ընտրում են զլուսաւորապէս

կամ որպէս արդարութեան Ատոտած: Խրաքանչիւր
առաւօտ, երբ եղիշի քուրդերը զարթում են քնից,
նրանց առաջին գործը լինում է իրանց պարտակա-
նութիւնը կատարել առանց բացառութեան. կան-
գնում են դէպի աղօթարան, ձեռքները կախ զգած,
կրեք անգամ գլուխ են տալի արեգակին, որով ամ-
բողջ օրվայ աղօթքը կատարած են լինում: Հէնց այս
պատճառով նրանք անուանվել են «արեւորդը»:
Եթէ մէկ եղիշի քրդի հարցնում էք նրա ի՞նչ լի-
նելը, նա անմիջապէս պատասխանում է թէ՛ «ես
հայ քրիստոնեայ եմ, ես Աստուած եմ ճանաչում,
Քրիստոսին պաշտում եմ», մինչդեռ նա ոչ թէ
պաշտում է Քրիստոսին, այլ պաշտում է բարդի
ծառը, համոզված լինելով թէ՛ Քրիստոսի խաչա-
փայտը նոյնպէս բարդի էր: Եղիշիները համաձայն
իրանց հոգեւորականների պատուէրներին, միշտ են
համարում իրանց կրօնի կամ հաւատի մասին
պատմել օտարներին, այլ պարտական են ինչպէս
սրբազան զաղանիք պահպանել: Եթէ մի անհատ
յայտնի կերպով յանդիման հայտնութիւն անել լուս-
նի, ուրիշ մոլորակների և մասնաւոր արեւի վե-
րաբերութեամբ, նա անմիջապէս զրկվում է եղի-
շի կամ Աշիւր (զիւլապն) լինելու արտօնու-
թիւնից: Աշնան սկիզբներում երևում է մէկ
աստղ (զուլե) Արուսեակ աստղն է), որ փայ-
լում է առաւօտները կրակի նման. նրա երևման
առաջին իսկ դիշերը ոչ մի կենդանի չունչ չը
պէտք է դուրսը մնայ, թէ՛ չէ կը մեռնի նրա
անբուժելի հարուածից: Ի պատիւ այդ աստղի,
խրաքանչիւր տուն մէկ սպիտակ և չաղ ուլաւոր է
զօհում: Այդ աստղի երևումն զուլակութիւն է
համարվում ցուրտը սկսելուն, այնպէս որ բոլորն

կանք կրողն է այժմ: Ելի կրկնում ենք, որ թիֆլիսը ոչ մի բանով ստոր չէ որ և է Տոմսից, եթէ ոչ բարձր, և թէ կովկասը նոյնպէս առհասարակ զօռաւ թէ ստոր լինի Սիբիրից:

Գ. Թ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տպելով «Մշակի» ներկայ համարում պ. Գ. Միր-դոյնանի յօդուածը, մեր յարգելի վկայասան Իսաֆիլի յօդուածին մասին, խմբագրութիւնս յօտարութեամբ յանձն է առնում ընդունել այդ առիթով մեզ ուղարկված բոլոր նուէրները և յանձնել ըստ պատկանելոյն:

Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւոր Ս. Պ. Ալազաթով, որպէս հարգողութեամբ է «ԱՊՈԼ. ՕԲՅԱՅ.» լրագրի, դումային ներկայացրեց հետեւեալ յայտարարութիւնը: Անդրկովկասեան Պրիկազը, որ հիմնել էր իշխան Վորոնցով միայն բարեգործական նպատակով, պահպանում էր իր նշանակութիւնը մինչև վերջին ժամանակները, այսինքն գնացող 1883 թիվ մինչև վերջին ամիսները: Բանալով իր դրամարկը առանց գնահատութեան բոլոր կարելի ունեցողներին համար, նա վարկում էր իր պարտաւորւթիւններին հետ քաղաքութեամբ և չէր ներդրում նրանց և դրանով էլ, տալով նրանց հնարաւորութիւն մաս-մաս վճարել իրանց պարտքը, ինքն, ի հարկէ, ոչ մի կօպէկ չէր կորցնում: Իսկ վերջին ժամանակները, երբ դրամական կրի-զիսի պատճառով քաղաքի կրիտիկական դրութիւնը և կարուածները գնալով ընկնելով ամիսներ ընդհանուր տրտմութեան մէջ գցելով, և երբ քաղաքը առաջվանից աւելի ևս իրաւունք ունէր սպասել իր բարեբաւ հիմնարկութիւնից թէ վերջոյթիւնն և թէ օգնութիւն, Պրիկազը կարծես հրաժարվեցաւ իր կոչումից և զինվեցաւ փոխառուների դէմ: Համարեա բոլոր դրաւ դրած կայքերի աճուրդով ծախելը կարծես միակ հոգաւորութեան առաքելայ դարձաւ: Պրիկազի համար, որը, անհաշիւ եռանդով ցոյց տալու հետ միասին, մոռանում է այն հանդերձները, որ մի քանի կարուածներ պէտք է առանց ծախվելու մնան, որովհետեւ ներկայումս ստատիկ անփողութեան և կարուածների գնալով ընկնելու պատճառով, գնողներ չեն ներկայանալ աճուրդին, և հետեալաւ, այդ կարուածները պէտք է մնան գնահատողներին կամ քաղաքին ի մեծ կորուստ այդ վերջինների. իսկ ուրիշ կարուածները պէտք է չնչին գնով ծախվեն և վերջնականապէս սրտանկայնեն փոխառուներին: Այդ բոլոր դէպքերում Պրիկազը, ներկայանալով որպէս պատիւ փոխառուների համար, իր շահերին ևս պակաս վնաս չէ հասցնում: Այն եռանդուն և կատարելապէս աղին մասնակցութիւնից յետոյ, որ մեր քաղաքային դուման ցոյց տուեց քաղաքային փոխառուների վիճակի վերաբերութեամբ, նրա վրա դրված է էլ ի մի ուրիշ պարտաւորութիւն, այն է շտապել միջնորդելու ուր հարկն է չուտ և անպատշաճ կանգնեցնելու աճուրդների նշանակելը գոնէ մինչև այն ժամանակ, երբ կը ստացվի դումայի ներկայացրած միջնորդութեան պատասխանը: Յայտնելով այդ բանի մասին քաղաքային դումային, եւ կարծում եմ հարկաւոր է լրագրութիւնն տալ քաղաքային, որ նա անդապաղ և առանց յետաձգելու միջնորդի, որ Պրիկազը կանգնեցնէ թիֆլիս քաղաքի կարուածները աճուրդով ծախելու կարգադրութիւնները:

ՍՂՆԱԽԻՅ մեզ դրում են հետեւեալը. «Առաջիկայ յոռնվարին տեղիս հայ երկուսու ուսումնաւորներում, չնորիք Նիշէէ բաժանայ Տէր-Աստուածատրեանի, բացվելու է մանկական դպրարան, որի կարևորութիւնը վաղուց զգալի էր այսպիսի մի վրացական քաղաքի ապա մանուկների համար: Մանկական դպրարանի հայտն համար ուսուցիչներից մէկը նուիրել է 10 բուրդ: Բացի մանկական դպրարանի և պարբերական լրագիրներից, դրամարանը տանալու է «Աղբիւր», «Վարժարան» և երեանի «Առողջապահական թերթ» հանդէսները: Կարգադրանքի ձրի օգուտ կարող են քաղել հին աւարտած աշակերտները և աշակերտութիւնները: Կարգադրանին իրանց մասնակցութեամբ աւելի կենդանութեան տալու համար դրացաճ և գնահատական նշանակվելու են աշակերտութիւններից երկուսը, որոնք դրամարանը կատարւարող ուսուցիչ նշանակված դրբերը բաժանելու են ուսանողներին և հաշիւը պահելու: Հաստ ցանկով կը լինէր, որ մեր յարգելի հեղինակները կամ հրատարակչները չը մերժէին մի-մի օրինակ դրբ նուիրելու քաղաքի դրամարանին: Կրբերը կարող են ուղարկել հետեւեալ հասցեով. Почетителю училищъ свѣщ. Египше Теръ-Аствадтрянъ.»

Նոյն տեղից մեզ դրում են, որ Շիրակում կենսական պիտուքները շատ աւատ և շատ էլ էժամանկ: Լու. մաքուր ցորենի ալիւրի պուրէ 60 կ., հալած իւղի պուրէ 11 բուրդ, 1 հաւը 15 կ., 5 ձուս 5 կ., 100 ամբարը 75 կ., պանիր պուրէ 2 բ. 40 կ., ոչխարի միւսը 6 կ., ցորենի սոմարը 10 բ., դարու սոմարը 4 բուրդ: Այնտեղ 1 սոմար ցորենը 18 պուտ է կշռում, և դարին 16 պուտ:

Մեզ դրում են ՍՂՆԱԽԻՅ հետեւեալը. «Շնորհիւ պրիւստով Հաղարայտեանի Սղնախի կեղծոտ փողոցները սկսում են փորը առ փոր մաքրվել: Վաճառանոցում խիտ հսկողութիւն է

տիրում կենսական գլխաւոր մթերքների վրա, որ նշանակված տախտակից աւելով չը վաճառվեն: Շնորհիւ նոյն պրիւստով շուտով մեր ծուռն ու մուռ փողոցները կը բուստարովեն լապտերներով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻՍՏՈՅ

Վան, 15/27 նոյեմբեր 1883

Կը խնդրեմ որ չնորձ անէք ձեր պատուական օրաթերթի մէջ հրատարակել Վասպուրականի կենդանական վարժարանի բ. շրջանի տեղեկագիրն և հաշուեցոյցն զոր ներփակ կը յղեմ ձեզ: Այդ հաշուեցոյցն կը տեսնուի որ մենք ունեցած ենք այս բ. տարեկան շրջանին մէջ 772 բ. 32 կ. (եօթ հարիւր եօթմասնասուն և երկու բուրդ և երեսուն երկու կօպէկ) հասցիւ է 691 բ. 32 կ. (վեց հարիւր իննսուն և մէկ բուրդ և երեսուն երկու կօպէկ) ծախք: Հետեալպէս, կենդ. վարժարանին մէջ, թէ իբր տեսուչ և թէ իբր ուսուցիչ երկու տարիէ ի վեր մեր ունեցած բուրդ աշխատութիւններին փոխադրէ մինչև այժմ շահած եմք միայն 81 (ութսուն և մէկ) բուրդ: Այդ շրջանի մէջ աղքատիկ աշակերտների պաշտպան գրուելով, նոցա թոշակներ յանձն առած են վճարել հետեւեալ պատուարժան անձեր. Վսեմ. Կամարական բէկ՝ 2 սան նախակրթարանի և 1 սան ուսումնարանի մէջ. Վսեմ. Խուրշիլ բէկ թիմուրզադէ՝ 1 սան նախակրթարանի մէջ. Մեծ. Կարապետ էֆ. Նախանեան՝ 1 սան ուսումնարանի և 1 սան նախակրթարանի մէջ. Մեծ. Տիգրան էֆ. Մանաւազեան կարնեցի՝ 1 սան նախակրթարանի մէջ. Մեծ. Մարտիրոս էֆ. Գալիկեան (թղթատար Վսեմ. Կամարական բէկին)՝ 1 սան նախակրթարանի մէջ:

Տեղական պահանջների համեմատ, ինչպէս նաև այլ կարեւոր պատճառներով, յարմար սեպտեմբեր մեր վարժարանի տարեգրութիւն սկսել սեպտեմբերին. ուստի այս բ. տարեշրջան ինն ամիս միայն տևողութիւն ունեցած է, սկսելով 1882 ամի դեկտեմբերէն մինչև 1883-ի օգոստոս ամիս վերջն: Հետեալպէս, բ. շրջանի երկուսուսն այդ 9 ամիսներին միայն կը վերաբերի:

Մենք բ. շրջանը սկսած ժամանակ (1882 դեկ. 1) ունէինք 33 աշակերտ որոցմէ 18 թոշակաւոր էին և 15 ձրիավարժ: Սոցա վրայ աւելցան նոյն միջոցին 3 թոշակաւոր և 9 ձրիավարժ աշակերտ ևս որով ամբողջի թիւն եղաւ 45 (21 թոշակաւոր և 24 ձրիավարժ): Սոցանէ պակած են յետոյ 8 աշակերտ որով այս գ. շրջանի սկիզբ (1883 սեպտ. 1) ունեցած ենք 37 աշակերտ միայն որոց վրայ աւելցաւ 1 նորիկ աշակերտ, ամբողջի թիւն եղած է այժմ 38:

Այն 8 պակսած աշակերտներէն 5-ը որ ուսումնարանէն էին և թոշակ վճարելու անկարող, առևտուրը դրաղելու պէտք ունենալով շուկայ գնացած են: Միւս 3-ը նախակրթարանէն են, յորոց մին ա. Գրիգորի վանքը փոխադրվելով չէ կարող երթեկեկել, երկրորդը որ թոշակաւոր աշակերտներէն էր ձրիավարժ ուսանելու համար գնացած է մի այլ վարժարան և երրորդն ալ մեռած է:

Այժմ մեր ունեցած 38 աշակերտներէն 29 ուսումնարանի մէջ են նոր տարիի կարգադրութեան համեմատ և 9 նախակրթարանի մէջ: Ուսումնարանի աշակերտներէն 15 թոշակաւոր են և 14 ձրի. նախակրթարանի աշակերտներէն 3 թոշակաւոր և 6 ձրի: Ուրեմն այժմ ունենք ամբողջ 18 թոշակաւոր և 20 ձրի աշակերտ:

Յայտնի է թէ այսչափ թոշակաւոր աշակերտներով տակաւին կենդանական վարժարանը շարունակելը պիտի բազմապատկէ մեր նիւթական անձկութիւնները, բայց մենք յուսալով որ թէ Վանցի և թէ օտարաբաղաւոր հայեր ձեռք կուտան և կօշնեն մեզ այս հանրօգուտ ձեռնարկի մէջ, այս տարի ևս հաստատաւորութեամբ կը շարունակենք կենտ. վարժարանն որով պիտի յաջողնք այդ ուսումնական տարիի վերջ 6 ընթացաւոր աշակերտ ևս դուրս հանել: Նախորդ 6 ընթացաւորներէն հետ միասնաւոր համար:

Կենդանական վարժարանի մէջ կը դասախօսուին հայերէն (աշխարհաբար և գրաբար), թուրքերէն և ֆրանսերէն լեզուներն, կրօն, հայրենագիտութիւն, աշխարհագրութիւն բնական, քաղաքական (աշխարհագրութեամբ հանդերձ) և առևտրական, պատմութիւն հայոց և ընդհանուր ազգաց, պատմութիւն մատենագրութեան հայոց (ընդարձակ) և եւրօպացոց (համառօտ), բնագիտութիւն,

գրահայն (աղբիւր), երկրագիտութիւն, հաշուաւորութիւն, բնական պատմութիւն (մարդավարութիւն, կենդանականութիւն և բուսականութիւն), բնագիտութիւն (ֆիզիկա), տարրաւորուածութիւն (քիմիա), գծագրութիւն և մարմնամարզ: Հոգաբարձութեան դասախօսութիւնը դադարած է այժմ, որովհետև վարժարէ Հոգաբարձական վարժարանին ուսուցիչ մեծ. պ. Նշան Մաղաթեանց որ, ըստ կարգադրութեան Վարազի վանահայր պերճաշնոր՝ խրիմեան հայրիկի, ձրիավար կը դասախօսէր կենդանական վարժարանին մէջ, հետեալած է այժմ Վանէն: Իսկ այս տարի բարձրագոյն (գ) դասարանին կը դասախօսուի մասն կա վարժութիւնն որոյ մի մասնապէս ուսուցիչն այժմ այստեղ ունենալու բաղադարութիւնն ունեցած ենք և որ անենելով մեր վարժարանի նիւթական նեղ դրութիւնն, մարդասիրաբար յանձն առած է օգնել մեզ, առանց վարձատրութեան դասախօսելով այդ առարկայն:

Կենդանական վարժարանի նախակրթարանի աշակերտը կը պարտի վճարել տարեկան թոշակ 12 արծաթ մէջլիւ: Իսկ ուսումնարանի աշակերտը 20 արծաթ մէջլիւ: Աղքատիկ աշակերտներն ձրի ընդունած ենք այն յուսով որ վասպուրականի մէջ կրթութեան տարածմանը փոխադր հայրենաստները կօշնեն մեզ և իրենց նուէրներով կը փոխարինեն աղքատիկ տղայների վճարելիք թոշակներն: Եթէ օտարաբաղաւոր հայեր իրենց խօսքով ցոյց տուած ուսումնասիրութեան գոնէ մէկ տասնհորդին չափը գործով ևս ցոյց տան և մի քանի տարի օգնեն մեզ վասպուրականի կենդանական վարժարանը շարունակելու համար, այնուհետեւ ըստ բաւական տեղական ուժեր յառաջ կը գան այստեղ որք ձեռք ձեռքի տուած կրնան գործել ազգապիւն մէջ, առանց մեծ աշակերտեան սպասելու օտարաբաղաւոր հայերէն: Բայց անտարբերութիւնը ի հարկէ կը սպասուէ և կոչնչացնէ այդէն գոնուած այժմիս ալ:

Պարտք կը համարիմ հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել հետեւեալ պատուարժան անձերին որք բարեհաճած են Կենդանական վարժարանին նուիրել հետեւեալ դրբերն, այդ բ. շրջանի ընթացքին մէջ:

Վսեմ. Կամարական բէկ՝ 4 պատկերազարդ Արուբեհական Լոտո № 2

Պերճաշնոր՝ խրիմեան հայրիկ՝ 5 Առողջաբանութիւն (բժիշկ Գալիկեանի):

Վսեմ. Մէսիկ Էֆէնդի (անդամ Վասպուրականի մէջլիսի Մարիֆին)՝ 3 Հավաքիւթիկաւոր (բնագրական պատկերազարդ մի գրուած թուրքերէն, նուիրողէն հեղինակուած):

Մեծ. պ. բժիշկ Լևոն Տիգրանեանց 5 թերթ Առողջապահական (մարմնամարդական հրահանգներ պարունակող):

> > > > 1 բառարան բժշկական բոյսերի մաս (վանտապ):

> > > > 1 > բ. (վասպուրական):

> > Սեդրակ Տէր-Սարգսեանց 1 Դահլէն ի Սիպիւր:

> > Բակոբ Տէր-յարութիւնեանց՝

(Վանցի ի Մարսէյ) 1 օրինակ Le Petit Mar-seillais լրագրէն կը շարունակէ յղել:

Խորին շնորհակալութիւն կը յայտնեմ մասնաւորապէս Պերճաշնոր՝ խրիմեան Սրբազան Հայրիկին որ իր բարձր օժանդակութիւն շնորհած է միշտ մեր վարժարանին, քաջալերելով գեղեցիկ չը թուրքական և յանձնարարելով ուր որ հարկն է: Նոյնպէս և ուսական դեր-հիպատոս Վսեմ. Կամարական բէկին որ կըր տեղեկացաւ թէ կենդ. վարժարանի Ա շրջանին վերջ մինը ոչ մի գրամ ստացած չըլինելէ զատ, 135 բլր. 50 կօպ. ալ մեր քօպէկ վրայ տալ պարտաւորուած ենք (թէ մի տարի ամբողջ ձրիավար աշխատած ալ էինք իբր ուսուցիչ), այդ բաց մնացած գումար ինք վճարելով քաջալերեց գեղեցիկ և կը շարունակէ մինչև այժմ իր պաշտպանութիւնը կենդ. վարժարանին մէջ ունեցած 3 ամիսներին Պարտաւոր եմ հրապարակով շնորհակալութիւն յայտնել Մեծ. Պ. Կարապետ Նախանեանցին որոյ նիւթական և բարոյական օժանդակութիւնները եթէ չունենային, անհարկ կը լինէր շարունակել կենդ. վարժարանն: Շնորհակալութիւն նա և վսեմ. թիմուրզադէ թէվ-ֆիկ բէկին որ անցեալ շրջանին մէջ հաճեցաւ ձրիավար դասախօսել մեր վարժարանի մէջ թուրքերէն լեզուն և օսմանն օրինադրութիւն: Նոյնպէս և պ. Գարբիէլ Նախանեան ազնիւ երիտասարդին որ կը շարունակէ ձրիավար դասախօսել թուրքերէն լեզուն մեր վարժարանին մէջ:

Հաճեցեք ընդունել և դուք, տէր խմբագրապետ խորին շնորհակալութիւններ Ձեր բարեսիրտութեան համար որով ոչ միայն ձեր հօգի օժանդակութիւն նուիրած էք կենդ. վարժարանի հիմնադրութեան և շարունակութեան, այլ և ձեր օրաթերթի էջերէն ալ նուիրած էք մերթ ընդ մերթ մեր կրթական աշխատութիւնները քաջալերելու համար:

Ոճէ գործ կամ գործող մարդ, ինչպէս իր բարեկամներ, ի հարկէ թշնամիներ ևս կուենայ. զի եթէ բարի է այդ գործ, չարեր կը թշնամանան. իսկ եթէ չար, բարիներ կը թշնամանան: Զարմանալի չէ ուրեմն որ կենդ. վարժարանն ալ իւր թշնամիներ ունենայ որք կամ շահանդուրութեամբ կամ նախանձով և կամ նախապաշարածներէ փոսացած մտքով կաշխատին վնասել նորան: Սոցա բերան եղած է Միքայէլ Սրուանձտեանց անուն երկտասարդ (եղբայր Սրուանձտեանց Գալիկեան վարդապետի) որ «Մեղուի» մէջ իմ անձնականի վերաբերեալ սուտեր և զրպարտութիւններ հրատարակելէ զատ, կենդ. վարժարանի աշակերտներին համար ալ կը գրէ թէ հրապարակներին մէջ իբր թէ կը քարոզեն որ «Ստուած չը կայ, պէտք է քանդել եկեղեցիները, պէտք է սրէ անցունել եկեղեցիները» և ալ այսպիսի յիմարական զրպարտութիւններ և ցնդարարութիւններ (տեսնել «Մեղուի» № № 86, 46 և այլն), որք տաւ արհամարհանքէ զատ ուրիշ պատասխանի արժանի չեն: Այդպիսի քսու և բաղադրանքի պարտնի մեր վրայ յարձակուած, մեզ քարկոծուած, նշան է արդէն որ մենք մեր նպատակին կը հասնինք: Վանի մէջ Պոտոլ չունեցող ծառին քար չեն նետեր: Պիտի տրբել ևս եթէ Սրուանձտեանցի նման ամեն վատութիւն և մատուցած յանձն առնող մի պարոն գրէր ինձ հաւանութեան և քաջալերութեան խօսքեր: Մարդիկ կան որոցմէ նախատուիլ փառք է:

Վասպուրականի կենդանական վարժարանի հիմնադիր—տեսուչ Մ. Գարիկեան

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏԻՍՏԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆՑ

ՍՈՑԻԱԼ, 13 դեկտեմբերին իշխան Ալէք. սանդր հաստատեց ազգային ժողովի վճիռը Տիւնիսի սահմանադրութիւնը երեք տարվայ ընթացքում գործադրելու և այդ ժամանակամիջոցից յետոյ ազգային մեծ ժողով գումարելու մասին, որը վերջնական վճիռ պէտք է կայացնէ սահմանադրութեան այն փոփոխութիւնների վերաբերութեամբ, որ նորերումն հաստատեց այժմեան ժողովը: Ժողովին նոր օրինագիւծ է ներկայացրած ժողովրդական զինաւորութեան մասին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 13 դեկտեմբերին Ժանգարանների զօրաբաժնի շտաբի հրամանատար զինեղալ-մայոր Կանտակովին անժամանակ արձակուրդ է ստանում, արձակվելով պաշտօնից: Լուրերի համեմատ, իշխան Կանտակովին Բոլդարիայի պատերազմական միւնիստր է նշանակվում:

ՓԱՐԻՋ, 13 դեկտեմբերին Մարկիզ Զէնգ երէկ Անգլիա ուղևորվեց:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 13 դեկտեմբերին Պետական բանկի 50% տոմսը առաջին շրջանի արժէ 96 բ. 75 կ., երկրորդ 94 բ. 75 կ., երրորդ 94 բ. 75 կ., չորրորդ 94 բ. 75 կ., հինգերորդ 94 բ. 75 կ., ներքին 50% տոմսը փոխառութեան տոմսը արժէ 221 բ. 25 կ., երկրորդ 209 բ. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսը արժէ 91 բ. 62 կ., երկրորդ 91 բ. 37 կ., երրորդ 91 բ. 75 կ., ոսկի 8 բ. 43 կ.: Ռուսաց 1 բուրջ Լոնդոնի վրա արժէ 23 1/2 պենս, ռուսաց 100 բուրջ Համբուրգի վրա արժէ 199 1/2 մարկ, ֆարիդի վրա 246 1/2 Ֆրանկ: Բոլայի տրամադրութիւնը հանգարտ է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԻՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաշուեցոյց վասպուրականի կենդրոնական վարժարանի Բ. շրջանին (1882 ղեկտեմբերէն մինչև 1883 օգոստոսի վերջ):

Մ Ո Ւ Տ Ք	ԲԲ.	ԿՕՎ.
Աշակերտներին ուղղակի վճարած թոշակներէն գոյացած հասոյթ	383	—
Աղբատիկ աշակերտներին պաշտպաններին վճարած թոշակներէն գոյացած հասոյթ	132	77
Նուէր վսեմ. կամարական-բէկէն (իւր ուսններին համար վճարած թոշակէն դատ).	167	42
Նուէր կենտրոնակ. վարժ. նպաստամատոյց մասնաժողովէն (Եւդոկիա).	34	05
Նուէր Թաւաղաղմասէր խումբի կողմէն (մեծ. Ամատունի էֆ. ձեռքով ի վան).	17	02
Նուէր մեծ. Սմարեան ցարութիւն էֆ. (վանցի ի Կ. Պօլիս).	9	20
Նուէր կենտր. վարժ. սանուց Օթան-դակ սանուց ընկ. (ի վան).	8	52
Նուէր մեծ. ձանդեան Մկրտիչ էֆ. (ի վան).	3	41
Նուէր մեծ. Առաքելեան Գարրիէլ է-ֆէրդինէն ի Սամսոն	6	13
Նուէր մեծ. Տ. Սարգսենց Սեդրակ էֆ. (ի վան).	3	41
Նուէր մեծ. Փէրիզեան Մկրտիչ էֆ. (ի վան).	2	56
Անցած տարիի վերջ բաց պարտք մնացած 1534 զրուշ 25 փարս թրքական փողերէն ուսական ընկ. վերածուէն պստմ եղած տարբերութիւնը.	4	83

Եօթ հարիւր եօթանասուն երկու ռուբլ և 32 կոպ. հասոյթ. 772 32

Ե Լ Ք	ԲԲ.	ԿՕՎ.
Անցած տարիի հաշուեցոյցին մէջ (որ հրատարակված է Տիֆլիսի «Մշակ» և «Արձագանք» լրագիրներին մէջ) հասոյթի կողմը բաց մնացած պարտք	135	50
Անցած տարիի վերջ աշակերտներին մրցանակաբաշխի առիթով եղած ծախքերն՝ նուիրված գրքերն. 26 17		
Փոխադրութեան, հրաւիրագրի և այլն ծախքեր.	1	27 44
Վարժարանի պաշտօնականներին (բացի տեսուչ-ուսուցչէն) խնամանայ թոշակներն (1882 ղեկտեմբերէն մինչ 83 օգոստոսի վերջ)	324	93
Վարժարանի տան խնամանայ վարձը	98	80
Վարժարանի գրադարանին համար գրք և լրագիր	35	74
Նորոգութիւններ (խորտակուած տախտակեղէններ, կտորած ապակիներ, վառարանի և այլն)	11	80
Գնուած մանր գրքեր (վառարանի յատակի տախտակ, կուժ, բարձ, աւել և այլն)	1	21

ՅԱՌԱՋԻԿԱՅ 1884 ԹՈՒՆԱԿԱՆԻՆ

„Ա Ր Չ Ա Կ Ն Ք“
Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ Ը

Կ Ը Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Ի

ՄԻՆԵՆՈՑՆ ԳԻՐՔՈՎ ԵՒ ՀԵՏԵՆԱԼ ՊՐՈԳՐԱՄԱՅՈՎ.

I. Տեղեկութիւններ կառավարութեան գործողութիւններին և օրէնսդրական միջոցների մասին:—II. Առաջնորդող յօդուածներ ազգային և հասարակական կեանքի նշանակող հարցերի վերաբերութեամբ:—III. Թղթակցութիւններ հայաբնակ տեղերից. ընդհանուր տեսութիւն հայ և օտար լրագիրների տեղեկութիւնների և կարծիքների:—IV. Տնտեսական և առևտրական հարցեր փոխադրացիութեան մէջ:—V. Յօդուածներ ազգային կրթութեան վերաբերութեամբ:—VI. Արտաքին տեսութիւն. յօդուածներ տեղեկութիւններ արտասահմանեան հասարակական և քաղաքական նշանակող անցքերի մասին:—VII. Կրթական և մատենախոսութիւն:—VIII. Ֆէլիէտօն:—IX. Խառն լուրեր:—X. Յայտարարութիւններ:

Տարեկան բաժանորդագինն է 5 ռ.
Կէս տարուանը 3 ռ.

Թիֆլիսում ստորագրութիւն ընդունվում է խմբագրատանը և «կենտրոնական գրադարանում»:

Օտարաբաղադրելի դիմում են՝ Тифлисъ въ Редакцію «Арцаганъ».

Ընդհանուր ծախք փոստի հետեւալ կերպով. 7 74
24 անձի 29 անգամ նամակներ և այլ կարեւոր պաշտօնագիրներ յղուած են օգնութիւն խնդրելու համար 1 06
6 անձի պաշտօնական թղթակցութիւններ եղած են վարժարանին համար զանազան խնդիրներով 8 80

Ջանադան մանր ծախքեր (կառավարութեան տրուած խնդրագիրներ, վարժարանի պէտքերն համար թուղթ և այլ) 4 44
Չմեռն վառուած փայտ (6 չէքի փայտ, գաղ և այլն) 27 67
Բ շրջանին վերջ աշակերտներին նուիրուած գրքեր մրցանակի համար. երկու շրջաններին վերջ, հիմնադրատեսչին մնացած շահը 15 01
81

Եօթ հարիւր եօթանասուն և երկու ռուբլ 32 կոպ. 772 32

Վասպուրականի կենտրոնական վարժարանի Հիմնադրութեանը
Մ. Փորթուղախանց

4000 ԱՓՍԷՆԵՐ 1-ին տեսակի 2 ռ. դիւծինը, զանախներ և պատառաքաններ, թէյ առաջին հունձի 1 ռ. 60 կ. հիմնալի, ԿՕՆՖԵԿՏՆԵՐ հաղի դէմ և զանազան տեսակի մուրաբաներ, էսէնցիա կակաօ, պիկուլի, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԵՎՈԼՎԵՐՆԵՐ, Ֆլանէլ և այլն մեծ քանակութեամբ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻՄ ՄԷՋ: Նոյն տեղը ամեն ժամանակ անդրակական և ֆրանսիական երկաթէ մահճակալներ և ուրիշ ապրանքներ ծախվում են 30% էժան քան թէ ուրիշ տեղ:

ՄԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է պարագլխի խանութում և կամ մի որ և իցէ գործի մէջ, ծառայութեան: Յանկացողքը կարող են դիմել «Մշակի» խմբագրատանը: 1—1

Մամուլի տակից լոյս տեսաւ
„ԱՐԱՐԱՏԻ ԳԼՈՒԽԸ“
Հանապարհորդական տպաւորութիւնների նկարագիր Դ. Լ. Մօրգոյցեւի. (Թիֆլիսից սկսած մինչև ԱՐԱՐԱՏԻ ԳԼՈՒԽԸ)
Մաքուր տպագրութիւն, ազնիւ թղթի վրա: Գինն է 1 ռուբլ հանդերձ ճանապարհ-հաճախով:
Ծախվում է Շուշիում փոխադրողի մօտ, որին կարելի է դառնալ այս հասցեով.
„Шуша, Аракелу Бабаханянцу“.
Ծանօթ. Գրքիս յարգելի բաժանորդներին յայտնում եմ ի գիտութիւն, որ ամենքն էլ շուտով կը ստանան իրանց գրքերը: Ա. Բաբախանեանց:
3—10

ՇՈՒՏՈՎ ԼՈՑՍ ԿԸ ՏԵՍՆԻ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ
ԲԱՅՅԻԻ „ՋԱԼԱԼԷԴԻԻՆ“ ՎԷՊԸ:
3—7

„ԱՌՂՋԱՊԱՆԱԿԱՆ ԹԵՐԹԻ“
Խմբագրութիւնը ընդունում է բաժանորդագրութիւն 1884 թ. (որ է 3 տարեշրջան):

„ԹԵՐԹԸ“ կը հրատարակվի ԵՐԵՒԱՆՈՒՄ, նախընթաց տարիների ծրագրով, կը տպագրվի պ. էմին ՏԵՐ-ԳՐԻԳՐԵԱՆՅԻ տպարանում:

Տարեկան գինն է՝ 3 ռուբլ կանխիկ վճարելի:

Ստորագրվել կարելի է խմբագրատանը, օտար քաղաքացիք դիմում են հետեւալ հասցեով՝ Въ г. Эривань. Въ редакцію журнала „Гигиенический Листокъ“.

Խմբագիր-հրատարակիչ բժ. ԼԵՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑ:

ՀԱՅՈՑ ԿՈՎԿԱՍԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Հայոց Կովկասի Բարեգործական ընկերութեան անդամակցութեան տոմսերը՝ ներկայ եւրոպ տարեշրջանի համար՝ ծախվում են ԾՈՎԻԱՆԵԱՆ կղաքային մարզում, պ. ԵՓ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑ 81 լամպայի մարզում և ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ գրադարաններում:

Մեր «Բնախօսութիւն» գիրքը, որ մինչև այժմ մի օրինակը վաճառվում էր նշանակած գնով—80 կոպէկով, այսուհետեւ կը վաճառվի 50 կոպէկով: Գիրքը պէտքական է թէ ուսումնարանների, թէ ուսուցիչների, և ընթերցող դասի համար: Յանկացողները կարող են ձեռք բերել Թիֆլիսի գրադարանայիններից և երևանում «Մանկանց բարեկամ» գրատնից, իսկ կիւրակէ օրերը եւրոպայում, Աղէքսանդրեան այգու զինաց, հրատարակիչ Մ. Բաղինեանց.



ՇՕԿՈԼԱՏ ԵՒ ԴՐԱԺԷ
Ս. ՍՈՒԻ ԵՒ ԸՆԿ.

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄՕՍԿՎԱՅԻ ՄԷՋ

Գտնվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ հետեւալ մարզայիններում: Գ. Մ. Կօպաձէի, Ս. Անիկովի, Ա. Պ. Ակօպովի, Վ. Ֆ. Սիւտովի, Ե. Ա. Նշիազարովի, Գ. Ա. Բաւադ-չեկի, Ս. Ա. Շոլիխանովի, Յ. Ա. Բաբախանյանի, Յ. Ի. Գալաղեհովի, Ի. Ա. Եւանդու-լովի և ուրիշ շատերի մարզայիններում, նոյնպէս և ԿՈՎԿԱՍԵԱՆ երկրի միւս բոլոր քաղաքներում:

21—24 (1—15)

ԲԱՅՈՒԱԾ Է ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ 1884 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

„Ա Ղ Բ Ի Ի Ր“

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ

ՄԻԱՄՍԵԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՏՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ:
(ՏԱՐԵՆԸ ԼՈՑՍ ԿԸ ՏԵՍՆԻ 12 ՀԱՄԱՐ 2—3 ՏՊԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ)

Կը հրատարակվի մի և նոյն դրեքով, մի և նոյն ուղղութեամբ և նոյն աշխատակիցների մասնակցութեամբ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ն

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

- I. Վէպեր, մանրավէպեր, դրոյցներ, առակներ, հեքիաթներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ:
- II. Բանաստեղծութիւններ:
- III. Գիտութիւն և արուեստ:
- IV. Հետաքրքիր տեղեկութիւններ:
- V. Այլ և այլք:
- VI. Մանկական, ֆրեքեյեան, չախմատի և այլ խաղեր, ըրեւանի, թաւաշական խնդրեր: Անկողոտներ, հանելուկներ, շուտասեղաններ:
- VII. Նրգեր նոտաներով:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

- VIII. Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ:
- IX. Առաջարկութիւններ, խորհուրդներ:
- X. Մատենախօսութիւն և նոր գրքեր:
- XI. Խառն լուրեր:

Ներկորդ բաժինը կը հրատարակվի առանձին թերթերով տարեւը չորս անգամ:

Տարեկան բաժանորդները կը ստանան երկու պրէմիա, յուլիսին և դեկտեմբերին:

„Ա.Բ.Ի.Բ.“ տարեկան բաժանորդագինը 3 ռուբլի է, կէս տարվանը՝ 2 ռուբլի: Հասցեն՝ Тифлисъ, редакция „Армюръ“, իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction du journal „AGBUR“.

„Ա.Բ.Ի.Բ.“ Թիֆլիսում կարելի է ստորագրուել և հայ գրադարանայիններում, պ. Շահվերդեանի պալլիսում ու Մանկական գրադարանում իսկ Պօլսում՝ Բուրաստան Մանկանց՝ հանդիսի խմբագրատանը:

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ:

2—3